ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« —— » _____ 2010թ. N_____

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԹԱՇԵՆ ԿԱՄՐՋԻ ՈՒՂԵԿԱՊԸ ԱՇՏԱՐԱԿԻ ԽՃՈՒՂՈՒ ՈՒՂԵԿԱՊԻՆ ՄԻԱՑՆՈՂ ՓՈՂՈՑԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Երևանի Դավթաշեն կամրջի ուղեկապը Աշտարակի խճուղու ուղեկապին միացնող փողոցն անվանակոչել Արցախյան պատերազմի հերոս, «Սասնա ծռեր» ջոկատի հրամանատար, զոհված ազատամարտիկ՝ Սամվել Պետրոսի Գևորգյանի անվամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակ՝ **Ռ. Բաղդասարյան**

ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևան քաղաքի Դավթաշեն կամրջի ուղեկապը Աշտարակի խճուղու ուղեկապին միացնող կառուցվելիք ճանապարհը անվանակոչելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումներում փոփոխություններ, լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին:

Երևանի ավագանու «Երևան քաղաքի Դավթաշեն կամրջի ուղեկապը Աշտարակի խճուղու ուղեկապին միացնող կառուցվելիք ճանապարհը անվանակոչելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումներում փոփոխություններ, լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Նախաձեռնության հեղինակ **Ռ. Բաղդասարյան**

Փորձագետ
Ա. Վարդանյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Դավթաշեն կամրջի ուղեկապը Աշտարակի խաճուղու ուղեկապին միացնող կառուցվելիք ճանապարհը՝ առաջարկում եմ անվանակոչել Արցախյան պատերազմի հերոս, «Սասնա ծռեր» ջոկատի հրամանատար, «Մարտական խաչ» առաջին աստիճանի, «Սպարապետ Վազգեն Սարգսյանի» անվան շքանշանակիր Սամվել Պետրոսի Գևորգյանի անվամբ՝ մշտապես վառ պահելու համար հայրենիքի ազատության համար կյանքը նվիրաբերած հերոսի հիշատակը:

Սամվել Գևորգյանը եղել է Արցախյան ազատամարտի մասնակիցներից, ով 1990թ. –ին իր «Սասնա ծռեր» ջոկատով մասնակցել է Ոսկեպարի մարտական գործողություններին, որից հետո 1991-1992թթ. Զինվորագրվել է Արցախյան գոյապայքարին, մասնակցել Լաչինի, Շուշիի և Խոջալուի ազատագրման պայքարին: Իր մասնակցությունն է ունեցել նաև Երասխավանի, Նոյեմբերյանի, Տավուշի, Կրասնասելսկի, Վարդենիսի և այլ շրջանների մարտերին:

1992թ. –ի հուլիսի 3-ին զոհվեց Սամվել Գևորգյանը՝ անհավասար մենամարտի դուրս գալով թշնամու տանկի դեմ և կրակն իր վրա վերցնելով փրկեց ամբողջ ջոկատը:

Մենք պարտավոր ենք հավերժացնել մեր զոհված ազատամարտիկի հիշատակը և այն ի պահ տալ սերունդներին:

Նախաձեռնության հեղինակ **Ռ. Բաղդասարյան**

Փորձագետ
Ա. Վարդանյան